Դեկտ. 3-ից Հայաստանը դարձաւ խորհրդային։ Դեկտ. 6-ին Երևան եկաւ Ցեղկոմը, և Լեդրանի հետ կնքած համաձայնութիւնը յայտարարեց չեղեալ ու Հայաստանում հաստատուեց բռնութեան, թալանի, կամայականութեան և ահաբեկումի ռէժիմ։ Հ. Ց. Դաշնակցութիւնը յայտարարուեց օրէնքից դուրս։ «Հարկաւոր է գլխատել ու ֆիզիքապէս ոչնչացնել Դաշնակցութիւնը», գրում էր հայ կոմկուսի պաշտօնաթերթ «Կոմունիստ»-ը։ Հայկական բանակը կազմալուծուեց։ Սպաները — 1500 հոգի զօր. Նազարբէգեանի, Հախվերդեանի, Սիլիկեանի գլխաւորութեամբ, ձիւն ձմեռին, ոտքով, քշուեցին Ռուսաստան։ Աքսորուեց և Դրօն իր սպաներով։ Բանտերը լեցուեցին հազարաւոր բանտարկեալներով։ Հ. Օհանջանեան, Աւ. Սահակեան, Ց. Քաջազնունի, Լ. Շանթ, Ն. Աղբալեան, Ար. Զիլինգարեան, Բ. Իշխանեան և շատ ու շատ ուրիշներ պատանդ առնուեցին։ Նրանց գլխին ամէն րոպէ կախուած էր մահը։ Փետր. 16 և 17-ի գիշերը, Երևանի բանտում գնդակահարուեցին աւելի քան յիսուն հոգի — Համազասպը, գնդ. Ղորղանեանը, Բանւոր Սերգոն, Մակեդոնը, ուսանող Գրիգորը և ուրիշներ։ Երկրի զանազան կողմերում բռնագրաւման պատրւակով կատարւում էին անասելի բռնութիւններ ու հարստահարութիւններ, սկսուեց մթերքների արտահանում դէպի Ազրբէջան։ Բոլշևիկեան խոստումներից չկատարուեց և ոչ մի բան։ Թիւրքը չհեռացաւ Ալեքսանդրապոլից և խորհրդային ներկայացուցիչների աչքի առջև վայրագութիւններ էր գործում Շիրակում։ Արտասահմանեան օժանդակութիւնը կտրուեց և Հայաստանը ընկաւ նոր սովի գիրկը։

Այս դրութիւնը աւելի ևս բարձրացրեց հայ ժողովրդի աչքին անկախութեան արժէքը և նման դրութեան հետևանքով էր, որ պայթեց փետրուարեան համաժողովրդական ապստամբութիւնը*)։ Փետր. 18-ին Հայաստանի մեծ մասը մաքրուած էր բոլշևիկներից։ Երկրի իշխանութեան գլուխ կանգնեց Հայաստանի Փրկութեան Կոմիտէն։ Կազմուեցին տեղական փրկութեան կոմիտէներ։ Շարժման մէջ դրուեցին երկրի բոլոր ռազմական ուժերը։ Եւ ժողովուրդը նմանը չտեսնուած վճռականութեամբ, ամիսներ շարունակ, կարելի է ասել, ատամներով ու եղունգներով դիմադրեց խորհրդային մեծագանգուած ուժերի գրոհներին։ Բոլշևիկեան յարձակումները սաստկացան, մանաւանդ, Վրաստանի խորհրդայնացումից յետոյ, երբ, կարմիր բանակը խոշոր ուժեր չպրտեց դէպի Հայաստան։

Ապրիլ 2-ին, Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի ուժերը թողին Երևանը և Կոտայքի ու Միլլիձորի վրայով անցան դէպի Լեռնահայաստան, ուր դեռ հոկտեմբերից սկսած տապալուած էր խորհրդային իշխանութիւնը։ Միանալով տեղական ուժերին, Արարատեան դաշտից եկած մարտիկներն ու գործիչները մի քանի ամիս ևս շարունակեցին պայքարը բոլշևիզմի դէմ՝ բարձր պահելով Հայաստանի անկախութեան դրօշը ու հետզհետէ, թշնամու ճնշման տակ տեղափոխուեցին հիւրընկալ Պարսկաստան, ուր դտան եղբայրական վերաբերմունք Ատրպատականի հայ ժողովրդի կողմից։ Յուլիս 10-ին Հայաստանի

---

*) Տե՛ս, «Փետրուար 18»-ը, հրատարակութիւն Հ. Ց. Դ. Պրազայի ուսանողութեան։